ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ ՀԱՄԱՑԱՆՑԻՑ

ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՄԱՐՏՈՒՆԻ 2022Թ

Բովանդակություն

Ներածություն 3

1. **Գրական ակնարկ**.....4
- Կրթության մեդիականացում.....4
- Համացանցի դերը կրթության ոլորտում.. 5

2. Մեթոդական մոտեցումներ.....6

- «Զրույց» ուսուցման մեթոդ.....6
- «Շրջված դասարան» մեթոդական մոտեցում.....7
- «Շրջված դասարան» մոդելի բնութագիրը 7

3 . Համացանցի ապահով կիրառումը դասապրոցեսում.....7

- էթիկական խնդիրներ և վտանգներ համացանցում.....7
- Ձեր առցանց իրավունքները և պարտականությունները 9
- Օգտակար խորհուրդներ 10

Փորձարարական հետազոտություն.....12

- Խմբի նկարագիր 12
- Փորձարարական դաս1.....13
- Փորձարարական դաս2.....13

Եզրակացություն.....13

Գրականության ցանկ.....14

Հավելված 1.....15

- Դասի պլան 1.....15
- Դասի պլան 2.....17
- Թեստ ծնողներին.....20

Ներածություն

Կրթված և գիտելիքներով զինված սերունդ դաստիարակելիս ծնող-ուսուցիչ, ուսուցիչ-ծնող փոխհամագործակցության համատեղ աշխատանքի գլխավոր նպատակը նախ և առաջ աշակերտի ուսումնական առաջադիմությունն է: Ուր ուսումնական առաջադիմությունը, այնտեղ՝ գնահատականը:

Դասը ուսումնական աշխատանքի կազմակերպման ձև է, երբ դասընթացներն իրականացվում են սովորողների որոշակի կազմի՝ դասարանի հետ, հստակ դասացուցակով՝ օգտագործելով սովորողների կոլեկտիվ և անհատական աշխատանքը՝ կիրառելով ուսուցման տարբեր մեթոդներ: Ավելի լայն իմաստով՝ դասը սովորողի կողմից նախկինում անծանոթ դասանյութի մասին պատկերացում կազմելուն ուղղված գործընթացն է : Ելնելով դասի ընթացքում կիրառվող մեթոդներից, դասի կազմակերպման ձևերից, դասի բովանդակությունից, անցկացման եղանակից, ուսուցման նպատակից, ուսուցման գործընթացի հիմնական փուլերից դասերը կարողեն տեսակավորվել տարբեր կերպ: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է: Դասը սովորողների գործունեության կազմակերպման ձև է, որում ներդրված են կրթադաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ , կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես վերջնարդյունքին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Մանակավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ կրթական համակարգի կատարելագործումը անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխոլոգիաների կիրառման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը:Կրթության բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական տեխոլոգիաներիշնորհիվ ստեղծվում է ուսումնաճանաչողական մի միջավայր, որը նպաստում է ինչպես անհատական, այնպես էլ խնբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը:

Պաշտոնական կրթությունն այսօր չի կարող հավակնել վերջնականու լիարժեք «գիտելիքների դարբնոցի» դերին, քանի որ յուրաքանչյուր հերթական տեղեկատվական պայթյուն չեզոքացնում է նախորդի կարևորությունը: Հետևաբար «գիտելիքների պաշարից» շատ ավելի կարևոր է դարձել «սովորել սովորելու», ինքնուրույն գիտելիքներ

ձեռք բերելու, հմտություններ ձևավորելու խնդիրը, որի շնորհիվ կրթությունը կարող է դառնալ անընդհատ, շարունակական ուսումնառության ողջ կյանքի ընթացքում:

Կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունը: Նորագույն մանկավարժական գիտական գրականության մեջ շեշտը դրվում է հատկապես ՏՀՏ նորարարությունների ներդրման վրա, որոնք նպատակաուղղված են սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ուսման դրդապատճառների խթանմանը, նրանց ճանաչողական գործունեության ակտիվացմանը, մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը, քանի որ դրանքնպաստում են ուսումնական գործընթացի արագացմանը, տեղեկատվության բազմակողմանի ներկայացմանը և հաղորդակցմանը, ուսումնական նյութի յուրացման որակի բարձրացմանը :

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Այժմ ավելի շատ խոսվում է հատկապես համակարգչային մանկավարժական տեղնոլոգիաների մասին , որոնք ենթադրում են համակարգչային սարքաշարը(համակարգիչ, օժանդակ այլ սարքավորումներ) և ծրագրաշար(ուսուցողական ծրագրեր, ցանցային տեխնոլոգիաներ) ուսումնական գործընթացում կիրառելու ալգորիթմի մշակում:

Այսօր կրթական համակարգում լայն կիրառություն են ստացել ցանցային տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս ստեղծել ուսումնական հաստատության կրթական պորտալը, անցկացնել հեռավար պարապմունքներ, հանդիպումներ, գիտաժողովներ, խորհրդատվություններ՝ իրական ժամանակում և հետադարձ կապի ապահովմամբ:

- **Կրթության մեդիականացում**

Ժամանակակից քաղաքական, սոցիալական, կրթական խնդիրների լուծումը, ի թիվ սայլ գործոնների, մեծապես պայմանավորված է հասարակության մեջ տեղեկատվության փոխանակության և տարածման ակտիվությամբ, հատկապես մարդկանց գիտակցության վրա ազդելու, ընկալումներն ու վարքը փոխելու նրանց ներուժով: Խոսելով մարդու վրա զանգվածային հաղորդակցության միջոցների(ԶՀՄ),այսինքն՝ մեդիայի ազդեցության մասին, պետք է նախ և առաջ նկատի ունենանք դրանց տեղեկատվական և լուսավորչական գործառույթները, որոնց շնորհիվ զանգվածային լսարանը բազմազան, հաճախ նաև հակասական ու չհամակարգված տեղեկատվություն է ստանում: Մեդիան, փաստորեն, հասարակության որոշակի շերտերի ոչ պաշտոնական կրթության

համակարգ է դարձել: ԶՀՄ-ներն էապես ազդում են բոլոր տարիքի մարդկանց՝ հասարակական նորմերի յուրացման,արժեքային կողմնորոշիչների և համակարգի ձևավորման վրա: Ստեղծված իրավիճակում մանկավարժության մեջ խիստ հրատապ ու կարևոր է դառնում նոր ուղղություն՝ մեդիակրթության (mediaeducation) ի հայտգալը, որն օգնում է սովորողներին ուսումնասիրել զանգվածային հաղորդակցության օրինաչափությունները, ազդեցության մեխանիզմները և դրանց մանիպուլացիաների ցպաշտպանվելու միջոցները:

Համակարգչային տեխնոլոգիաների՝ ժամանակակից և մատչելի համակարգչային գործիքների կիրառումը, ինչպես նաև, աշակերտակենտրոն մանկավարժական մեթոդները, դպրոցական տարիքիքից սովորողներին ժամանակակից ՏՀՏ-ին հաղորդակից դարձնելը միտված է լուծելու հետևյալ խնդիրները.

1. Նախապատրաստել նոր սերնդին ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում ապրելուն:

2. Սովորեցնել ճիշտ ընկալել բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվությունը:

3. Հասկանալ, գիտակցել մարդու հոգեկանի վրա զանգվածային տեղեկատվության ազդեցության մեխանիզմները:

- **Համացանցի դերը կրթության ոլորտում**

Համացանցի դերը առանձնահատուկ է կրթության ու գիտության ոլորտներում: Այնստեղծվել ու մշակվել է համալսարաններում՝ նպատակ ունենալով տարբեր երկրներում աշխատող հետազոտողների միջև ապահովել տեղեկատվության ազատ և արագ փոխանակումը: Ակնհայտ է , որ առանց կրթության գիտությունը չի կարող զարգանալ, այդ իսկ պատճառով համացանցում շատ արագ տեղադրվեցին մեծածավալ կրթական պաշարներ, որոնք արագ թարմացվում են:մ Դրանց մեջ ներառվել են առցանց գրադարանները, հեռավար ուսուցման դասընթացները և բազմաբնույթ այլ ուսումնական նյութեր:

Այժմ հայաստանյան դպրոցների մեծ մասը հիմնականում միացած է համացանցին և բավականաչափ հագեցած է համակարգչային սարքավորումներով: Ուստի մեծ անհրաժեշտություն է դարձել համացանցի անվտանգ օգտագործումը և դպրոցում և տանը:

- **Յուրացնել շփման, հաղորդակցության ոչ լեզվական ձևերը:**

Հասարակական զարգացման ներկայիս շրջանը բնորոշվում է կյանքի բոլոր ոլորտներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զանգվածային կիրառմամբ՝ ապահովելով տեղեկատվական հոսքերի տարածումը և ստեղծելով գլոբալ տեղեկատվական տարածություն: Հասարակական նման զարգացման անբաժանելի մասն

է հանդիսանում նաև կրթության ինֆորմատիզացումը: Ներկայումս Հայաստանում գնում է կրթական այնպիսի համակարգի զարգացման գործընթաց, որը կողմնորոշված է միջազգային ինֆորմացիոն-կրթական տարածք մուտք գործելուն: Այս գործընթացն ուղեկցվում է մանկավարժական տեսության և պրակտիկայի և, առհասարակ, կրթական գործընթացի էական փոփոխություններով: Այդ փոփոխությունները դիտարկվում են նաև հանրակրթության համակարգում, որի ինֆորմատիզացումը հանդիսացավ ՀՀ դպրոցական կրթության մեջ վերջին տասնամյակներում ներդրված ամենախոշոր նորարարություններից մեկը: Ժամակակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցումը կրթության ոլորտ հանգեցրեց ուսումնական գործընթացի փոփոխմանը թե՛ բովանդակության, թե՛ մեթոդների, թե՛ կազմակերպման տեսանկյունից:

2 Մեթոդական մոտեցումներ

- **«Զրույց» ուսուցման մեթոդ**

Զրույցը ուսուցման մեթոդ է, որը կիրառվում է սովորողի մտավոր գործունեությունն ակտիվացնելու նպատակով: Զրույցի ընթացքում սովորողը կրկնում և ամրապնդում է անցած նյութը, ձեռք բերում նոր գիտելիքներ: Ի հայտեն գալիս սովորողի անհատական առանձնահատկությունները, մշակվում են տրամաբանորեն մտածելու, փաստերի և երևույթների միջև նոր կապեր հաստատելու, ուշադիր լսելու, վիճելի հարցերին քննադատաբար մոտենալու և կոլեկտիվ ձևով լուծելու կարողություններեն: Զրույցը չի ընթանում խստորեն մշակված պլանով, կիրառվում է ուսումնական պրոցեսում այլ մեթոդների հետ զուգակցված: Զրույցը բարոյական դաստիարակության մեթոդներից է:

Զրույցը – հարց-պատասխան հիմնաքննարկումների, երկխոսություններիժամանակաշակերտների տեղեկատվություն ստանալու ձև է: Զրույցիտեսակէ՝փորձարարական զրույցը: Փորձարարական զրույցի առանձնահատկություններեն՝մասնակիցները գիտակցում են զրույցի նպատակը բոլոր հարցերնայնպեսենընտրվում, որ աշակերտները հնարավորություն են ստանումինքնուրույնեզրահանգումներ անել կամ գուշակել պատասխանը զրույցիընթացքումնախատեսվում են պարզ և բարդ հարցեր, վերջիններս ձևակերպվումենորպեսխնդիրներ, իսկ դրանցում առանձնացվում են առավել մասնավոր հարցերընդիրիյուրաքանչյուր հարցի լուծմանը հետևում է ուսուցչի կողմից աշխատանքիարդյունքները ամփոփող եզրակացությունը:

- **«Շրջված դասարան» մեթոդական մոտեցում**

«Շրջված դասարան»-ը մանկավարժական մոտեցում է,որը փոխումէ ուսուցմանմեթոդների ավանդական կազմակերպումը: «Շրջված դասարան» մեթոդիկիրառմանժամանակ տեսական մասը կատարվում է տանը՝ դասարանի հետավելիակտիվևինտերակտիվուսուցման համար հնարավորինս շատ ժամանակ շահելու նպատակով:«Շրջված դասարան»-ը խառը տիպի դասի ուսուցման մոդել է, որիընթացքումսովորողները դասանյութին ծանոթանու են տանը տեսանյութեր կամայլ կրթականյութեր դիտելով, իսկ «տնային աշխատանքը» դասարանում է կատարվում: Այսմոդելը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցական տեղնոլոգիաների

8զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է «դասարանի շրջում» կառցանցնյութերի հրապարակումը: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնումենփոքր տեսանյութեր, որոնք դասավանդողներն իրենք են պատրաստումկամընտրումեն այլ գործընկերների հետ առցանց փոխանակած նյութերից, իսկսովորողներըդրանք ուսումնասիրում են ինքնուրույն առերես դասընթացից առաջ : ՈՒսուցումնիրականացվում է դասի ընթացքում դասավանդողի անհատական աջակցությամբ:Այն հնարավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ մանկավարժականաշխատանքներ իրականացնելու համար:

- **«Շրջված դասարան» մոդելի բնութագիրը**

«Շրջված դասարան» մոդելի կիրառման դեպքում ուսուցիչը գիտելիքներիփոխանցողի դերից անցնում է գիտելիքների միջնորդի դերի, ու փնտրում, ստեղծումևսցենավորում է թվային ռեսուրսներ, ուղեկցողի և խորհրդատուի դերի, ովներառումէաշակերտներին իր գասընթացի պատրաստմանը: Ինչու՞ ավանդականմոդելը:Գոյություն ունի տրամաբանական բացատրություն, որը տալիս է այսհարցիպատասխանը: Դա Բենիամին Բլումի տաքսոնոմիայի հասկացություննէ, որըբացատրում է գիտելիքների ձեռք բերման մակարդակները: Ավանդականմոդելիդեպքում դասարանում իրականացված ուսուցումը ուսուցչի կողմից փոխանցվածգիտելիքների գրանցումն է (ցածր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ),իսկ հմտություններ զարգացումն ու խորացում ավելի բարձրմակարդակիճանաչողական առաջադրանքներ) սովորաբար կատարվում են դասարանիցդուրս:Դասը շրջելու տրամաբանական հինք կարող հանդիսանալ ուսուցչին աշակերտներիհետ կցելը, երբ նրանք կատարու են բարձր մակարդակի ճանաչողականառաջադրանքներ և օգնության կարիք ունեն, նաև թույլ տալ, որ աշակերտներըկատարեն ավելի հեշտ առաջադրանքներ հասակակիցների հետառկակամհեռակա:«Շրջված դասարան» մոդելը կիրառելիս դասավանդողները ստեղծումեն«ճկուն»աշխատանքային միջավայր , որտեղ աշակերտները կարող են ընտրել , թեերբևորտեղ կարող են սովորել: Սովորողներն ակտիվորեն ներգրավված ենուսուցմանգործընթացում և ձեռք են բերում հիմնական կարողություններնուհմտություններնը՝կատարելով տարաբնույթ առաջադրանքներ: Դասավանդողները

9պարբերաբար աջակցում են սովորողներին զարգացնելու տարաբնույթհմտություններ, ուղղորդում նրանց հեշտությամբ հասկանալու դասանյութը:Դասավանդման ժամանակ դասավանդողները արհեստավարժորենմշտապեսհետևում են սովորողներին, պարբերաբար արձագանքելով նգնահատելովսովորողների աշխատանքը:

3. Համացանցի ապահով կիրառումը դասապրոցեսում

- **էթիկական խնդիրներ և վտանգներ համացանցում**

Բացի կրթական տեղեկատվությունից, գլոբալ ցանցը պարունակումէ ցանկացածտեսակի բազմաթիվ նյութեր: Ծագում է չափազանց կարևոր խնդիր՝դեռահասներիանվտանգության ապահովումը ինտերնետում, որը կարող են լուծել միայնմեծահասակները՝ ծնողները և ուսուցիչները: Դեռահասը, իր հոգեբանականզարգացման առանձնահատկությունների պատճառով, հետաքրքրված է ամենինչով:Հետևաբար, այս ուսումնական տարում 11-րդ դասարանի աշակերտներիհետանցկացրած հետազոտության թեման ինտերնետի անվտանգ

օգտագործմանխնդիրներ: Ինտերնետն ունի լայն հնարավորություններ, այն լուծում է հազարավորմարդկային խնդիրներ, բայց առանց ցանցում անվտանգ աշխատանքիկանոններիիմացության, վնաս է պատճառում օգտագործողներին: Տեղեկատվականտեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են դասապրոցեսում: Ընտանիքիբոլորանդամներն ունեն համակարգիչ, նոութբուք, պլանշետ կամ սմարթֆոն: Մենքայլևսչենք կարող պատկերացնել մեր կյանքը առանց ինտերնետի: Բայց գլոբալ ցանցիօգտագործումը մեծ ռիսկեր է պարունակում: Անվտանգության խնդիրնառաջինտեղում է: Ինտերնետից և տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու անվտանգությունը մեր ժամանակների ամենահրատապ և կարևոր թեմաներից մեկն է: Ինտերնետն այն վայրն է, որտեղ դուք սիրում եք անցկացնել ձեր ազատ ժամանակի մեծ մասը: Ընկերների հետ զրուցել, ծանոթանալ, սովորել, զվարճանալ ... Այնուամենայնիվ, մի մոռացեք հոգ տանել ձեր անվտանգությանմասին: Ինտերնետը դարձել է գրեթե բոլորի կյանքի էական մասը: Էլեկտրոնային փոստից բացի, որն արդեն հարազատ է դարձել, մենք սկսում ենք անձնականէջեր,բլոգեր, միանում համայնքներին, փնտրում հարազատներ, ծանոթներ, դասընկերներև հին ընկերներ ՝ ստեղծելով ցանցեր, որոնք կարող են դառնալ մերիսկծուղակը:Անվտանգություն մեր օրերում հատուկ և առաջնային ուշադրություն պետք էդ արձնել ինտերնետում ձեր անձնական անվտանգությանը: Ձեր մասին անհարկի մանրամասն և ամբողջական տեղեկատվության տեղադրումը, անձնագրի տվյալները, հասցեն, առօրյան և ծրագրերը կարող են դրդել խաբեբաների կամ նույնիսկ կողոպտիչների: Հետեւաբար, դուք պետք է իմանաք ինտերնետի անվտանգ օգտագործման կանոնները: Տեղեկություններ կողպեքի վերաբերյալ personal ցանկացած անձնական տեղեկատվություն պետք է լավ վերահսկվի: Օգտագործեք ուժեղ գաղտնաբառ. Այն պետք է պարունակի առնվազն 8 նիշ և բաղկացած լինի մեծ և փոքրտառերից, թվերից, հատուկ բառերից: կերպարներ: Մի օգտագործեք նույն գաղտնաբառը բազմաթիվ ռեսուրսների վրա: Գաղտնաբառը պետք է լինի յուրահատուկ յուրաքանչյուր ծառայության համար: Զգուշացեք հղումներից Աշխատանքի նպատակը. Զրույցի միջոցով փորձենք պարզել ինտերնետի թաքնված վտանգները եւ սովորեցրեք, թե ինչպես խուսափել դրանցից:

Ուսումնասիրությունը կենտրոնացած էր այնպիսի սպառնալիքների վրա, ինչպիսիքեն.

- Ձեր համակարգչի վրա չարամիտ վարակի սպառնալիք
- Անպատշաճ բովանդակության մուտք
- Անծանոթ մարդկանց հետ շփումներ

Դասի շրջանակներում նախահարցում եմ իրականացվել դասարանի 20 աշակերտների շրջանում: Հարցաթերթիկները պարունակում էին հետևյալ հարցերը.

1. Ինչի՞ համար է օգտագործվում ինտերնետը:

2. Ո՞ր ինտերնետային ծառայություններն եք համարում ամենակարևորը ձեր և ամբողջ հասարակության համար:

3. Ի՞նչ ինտերնետային խաբեությունների մեջ եք ընկել:

4. Ինտերնետից անվտանգ օգտվելու ի՞նչ եղանակներ գիտեք:

Արդյունքում, եզրակացություն արվեց. Ինտերնետն ունի լայն հնարավորություններ, լուծում է հազարավոր մարդկային խնդիրներ, բայց դուք պետք է իմանաք ցանցում աշխատելու անվտանգության կանոնները, հակառակ դեպքում ինտերնետը միայն վնաս կպատճառի: Մենք օգտագործում ենք ինտերնետը ամեն օր ուստի անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել մեր իրավունքներն ու պարտականությունները առցանց միջավայրում,սովորերել ինչպես շփվել ինտերնետում և զվարճանալ դրա հետ, սոցիալական ցանցերում հաղորդակցություն և նյութերի հրապարակման անվտանգությունը: Ինչպե՞ս պաշտպանել ձեզ այս և այլ դժվարություններից:

Մեր առցանց իրավունքները և պարտականությունները

Դուք իրավունքներ ունեք, և այլ մարդիկ պետք է հարգեն դրանք: Դուք երբեք չպետք է հանդուրժեք այլ մարդկանց հետապնդումները կամ ահաբեկումները: Իրականկյանքի օրենքները կիրառվում են նաև առցանց միջավայրում:

Դուք իրավունք ունեք օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներ՝ ձեր անհատականությունը զարգացնելու և ձեր կարողությունները ընդլայնելու համար:

Դուք իրավունք ունեք պաշտպանել ձեր անձնական տվյալները:

Դուք իրավունք ունեք ազատ արտահայտվելու և ձեզ հարգելու իրավունք, և իննույն ժամանակ, միշտ պետք է հարգեք ուրիշներին:

Դուք կարող եք ազատորեն քննարկել և քննադատել այն ամենը, ինչ հրապարակվում կամ հասանելի է համացանցում:

Դուք իրավունք ունեք ՈՉ ասել մեկին, ով առցանց միջավայրում ձեզանից ինչ-որ բան է խնդրում, ինչը ձեզ անհարմարություն է պատճառում:

Եթե գրանցվել եք սոցիալական ցանցում, օգտագործեք ձեր գաղտնիության կարգավորումները՝ ձեր առցանց պրոֆիլը պաշտպանելու համար, որպեսզի միայն ձեր ընկերները կարողանան դիտել այն: Խնդրեք ձեր ծնողներին օգնել պարամետրերում, եթե դա ձեզ համար դժվար է: Այս կանոնը շատ կարևոր է:

Ձեր անձնական տվյալները գաղտնի պահեք, հատկապես մեծահասակների սոցիալական ցանցերում շփվելիս: Օգտագործեք ձեր մականունը ձեր իսկական անվան փոխարեն ցանկացած առցանց ծառայության վրա, որտեղ շատ անծանոթ մարդիկ կարող են կարդալ ձեր տվյալները: Նախքան ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարը կամ որևէ այլ անձնական տեղեկատվություն համացանցում որևէ մեկին կիսելը խորհրդակցեք ձեր ծնողների հետ:

Նախքան որևէ բան առցանց տեղադրելը կամ կիսվելը, երկու անգամ մտածեք: Պատրա՞ստ եք այս մասին պատմել բոլորին, ովքեր առցանց են՝ ձեր մտերիմ ընկերներին, ինչպես նաև անծանոթ մարդկանց: Հիշեք, որ տեղեկատվություն, լուսանկարներ կամ որևէ այլ նյութ համացանցում տեղադրելով, դուք երբեք չեք կարող դրանք հեռացնել ինտերնետից կամ կանխել այլ մարդկանց օգտագործումը:

Նախքան ձեր մասին որևէ տեղեկատվություն որևէ կայքում մուտքագրելը, իմացեք,թե ինչպես կարող է օգտագործվել այս տեղեկատվությունը: Կարո՞ղ է տեղեկատվությունը ամբողջությամբ

կամ դրա մի մասը հրապարակվել, և եթե այո, որտե՞ղ: Եթե Ձեզ անհարմար է խնդրվող տեղեկատվության քանակը, եթե չեք վստահում կայքին, մի տվեք տեղեկատվություն: Փնտրեք մեկ այլ նմանատիպ ծառայություն, որի հետ աշխատելու համար պահանջվում է ավելիքիչտեղեկատվություն, կամ նրա վարչակազմը խոստանում է ավելի զգույշ լինել ձեր տվյալների նկատմամբ:

Ինտերնետում կարող եք շփվել նախկինում ձեզ անհայտմարդկանցհետ: Դուքկարող եք խնդրանքներ ստանալ անծանոթ մարդկանցից, ովքեր կցանկանային, որդուք դրանք ներառեիք ձեր կոնտակտների ցուցակում և կարողանայիք տեսնել ձեր պրոֆիլը, սակայն պարտադիր չէր դրանք ընդունել: Ոչ մի վատբան չկա հրավերների մերժման մեջ, եթե վստահ չեք դրանցում: Ավելի շատ կոնտակտներ ձեռք բերելը սոցիալական ցանցերի նպատակը չէ:

Եթե ձեզ բռնության են ենթարկում առցանց.

Անտեսել այն: Մի պատասխանիր հանցագործին: Եթե նապատասխանչստանա,կարող է ձանձրանալ ու հեռանալ:

Արգելափակել այս անձին: Սա կպաշտպանի ձեզ որոշակիօգտվողիհաղորդագրությունները դիտելուց:

Մեկին ասա: Ա սացեք ձեր մայրիկին կամ հայրիկին կամ մեկ այլ վստահելիչափահասի:

Պահպանեք ապացույցները: Սա կարող է օգտակար լինել մեկին գտնելու համար, ովփորձել է վախեցնել ձեզ: Որպես ապացույց պահեք տեքստերը, էլ. Նամակները,առցանց խոսակցությունները կամ ձայնային փոստը:

Հաղորդել այն. Ձեր դպրոցի ղեկավարությունը: Ուսումնական հաստատությունը պետք է ունենա ահաբեկչական իրավիճակի իր քաղաքականությունը:

Ձեր մատակարարը, բջջային օպերատորը կամ կայքի ադմինիստրատորը: Նրանք կարող են քայլեր ձեռնարկել ձեզ օգնելու համար:

Ոստիկանությանը: Եթե կարծում եք, որ ձեր անվտանգությանը սպառնալիքկա,ապա մեծահասակներից մեկը կամ դուք ինքներդ պետք է դիմեքիրավապահմարմիններին:

Առցանց խաղեր խաղալ

Եթե մյուս խաղացողը անպարկեշտ է վարում կամ ձեզ անհարմարությունէպատճառում, արգելափակեք դրանք ձեր խաղացողների ցուցակում: Կարող եք նա ևզեկուցել խաղի մոդերատորին:

Սահմանափակեք ձեր խաղաժամանակը, որպեսզի կարողանաք զբաղվել այլ գործերով, ինչպիսիք են տնային աշխատանքը:

Գաղտնի պահեք անձնական տվյալները:

Մի մոռացեք ժամանակ հատկացնել իրական կյանքի, ձեր ընկերների, սպորտի և այլ հետաքրքիր գործունեության համար:

- **Օգտակար խորհուրդներ**

Անտեսեք այլ օգտվողների վատ վարքագիծը, հեռացեք տհաճ խոսակցություններիցկամ անհամապատասխան բովանդակությամբ կայքերից: Ինչպես իրականկյանքում,կան մարդիկ, ովքեր տարբեր պատճառներով իրենց պահումենագրեսիվ,վիրավորական կամ սադրիչ ուրիշների նկատմամբ կամ ցանկանումենվնասակարբովանդակություն տարածել: Սովորաբար լավագույնն է անտեսել, ապաարգելափակել նման օգտվողներին:

Մի տեղադրեք այնպիսի բաներ, որոնց մասին չէիք ցանկանա, որուրիշներնիմանային, և որ երբեք նրանց անձամբ չէիք ասի;

Հարգեք այլ մարդկանց իրավունքները: Օրինակ, ընկերոջ կողմից ձեզտրվածլուսանկարը նրա սեփականությունն է, այլ ոչ թե ձեր: Դուք կարող եք այնտեղադրելառցանց, եթե ունեք դրա թույլտվությունը և պետք է նշեք, թե որտեղից եքայնստացել:Կարևոր է ձեռնպահ մնալ SMS- ի, MMS- ի, ակնթարթային հաղորդագրություններիծրագրերի, էլ. Փոստերի, զրույցների միջոցով կամ այլ օգտվողներիհետառցանցշփվելուց ստացված սադրիչ հաղորդագրություններին պատասխանելուց: Փոխարենը,դուք պետք է քայլեր ձեռնարկեք, որոնք կօգնեն բացառել կամ սահմանափակելձեզհրահրելու փորձերը:

Օրինակ:

Շատ խաղեր թույլ են տալիս բացառել տհաճ կամ անցանկալի խաղացողներին. Էլ.փոստի ծրագրերի մեծ մասը թույլ է տալիս միացնել ֆիլտրերը՝արգելափակելուանցանկալի մուտքային նամակները:

Հիշեք, որ ինտերնետում դուք շփվում եք իրական մարդու հետ: Պատկերացրեք, թեինչպես կշփվեիք այս մարդու հետ իրական կյանքում: Նույն կերպշփվեքնրահետ ինտերնետում: Անկախ նրանից, դա ձեր ընկերն է, վեբ կայքում կամֆորումումնործանոթը, կամ առցանց աջակցության մասնագետը, որը պատրաստէձեզխորհուրդներ տալ տարբեր հարցերում:

Եթե կոպիտ եք, վիրավորված, նվաստացած, մի պատասխանեք: Կայքերումևֆորումներում կա նման գործառույթ ՝ արգելափակել հանցագործին կամբողոքելնրամասին մոդերատորին: Օգտագործեք այն և մի վախեցեք. Կռվարարըչիիմանա, որդուք դա արել եք:

Երբեք անծանոթներին մի ուղարկեք բջջային և տան հեռախոսահամարներ, տանհասցե, էլ. հասցե: Սա անձնական տվյալներ են, և անձնականը նշանակումէմիայնքոնը:

Նախքան ձեր լուսանկարները ինտերնետում տեղադրելը, լավմտածեք:Պատկերացրեք, թե ինչ կզգայիք, եթե ձեր ոչ այնքան արժանապատիվբովանդակության լուսանկարները տեսնեին ծնողները կամ ուսուցիչները:

Եթե, ի վերջո, ինչ-որ տհաճ կռվարար է հետապնդում ձեզ, պահեքնրաբոլորնամակներն ու sms-երը և ցույց տվեք այն վստահելի մեծերին ՝ծնողներին, ավագեղբայրներին և քույրերին:

Ինտերնետն այն վայրն է, որտեղ դուք սիրում եք անցկացնել ձեր ազատժամանակիմեծ մասը: Ընկերների հետ զրուցել, ծանոթանալ, սովորել, զվարճանալ…Այնուամենայնիվ, մի մոռացեք հոգ տանել ձեր անվտանգության մասին:

Հիշեք հետևյալը՝ ինտերնետը ձեր թշնամին չէ: Խնդիրըինտերնետից անխոհեմ կերպով օգտվելն է: Համացանցն արտաքին աշխարհիհետհաղորդակցվելու ժամանակակից գործիք է, որն անհրաժեշտպահինկարողէօգնության հասնել և լրացնել ինֆորմացիոն բացը: Դրակարևորությանմասինխոսում են բոլորը: Գոյություն ունի, սակայն, դրանից օգտվելու մշակույթ: Հաճելիէ,երբ շահն ու պատասխանատվությունը ոչ միայն չեն հակասում, այլև, լրացնելովմիմյանց, տալիս են ցանկալի արդյունք: Ինտերնետը ձեր համար միայննորգիտելիքձեռքբերելու, աշխարհընկալում ձևավորելու և զարգանալու միջոց դարձրեք:

Հետազոտական աշխատանքի արդյունքներն ամփոփեցինք հետևյալ հարցաշարով.Ինչպե՞ս է համացանցը խթանում նորարար ստեղծագործությանը: Ինչու՞ խոսեցինք մասնավոր կայքի անձեռնմխելիության մասին: Ի՞նչ կապ ունի համացանցը հետապնդման կամ ոտնձգության հետ: Ինչպե՞ս պայքարել հետապնդման և ոտնձգության դեմ դպրոցումկամտանը:Ինչպե՞ս և ումի՞ց ստանալ աջակցություն առցանց հետապնդումներիժամանակ: Խոսեք էթիկական նկատառումների և վտանգների մասին:

Ամփոփելով աշակերտների կողմից լրացվաց թեստի արդյունքները կարողենքասել,որ մենք ունեցանք հետևյալ վերջնարդյունքները. Ուսուցողական – ամրապնդեցինք համացանցի ապահով և անվտանգ օգտագործմանկարևորության և անհրաժեշտության մասին գիտելիքները:

Զարգացնող-զարգացրեցինք համացանցից օգտվելու ինքնուրույնությունը,ուշադրությունը, պատասխանատվությունը և քննադատական մտածողությունը:

Դաստիարակչական-նպաստեցինք աշակերտի ճիշտ արժեքային համակարգիձևավորմանը, էթիկայի նորմերի իմացությանը և կիրառմանը համացանցում:

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիր

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 12 աղջիկ և 13 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Բոլորը սիրում են «ինֆորմատիկա» առարկան, սիրով են մասնակցում դասերին, կատարում գործնական և լաբորատոր աշխատանքները: Դասարանի հիմնական մասը գիտի համակարգիչը և համացանցից օգտվելու ճիշտ կանոնները և քանի որ բոլորի տանը էլի երեխաներ կան, ուստի մեր փորձարարական դասերին մասնակից դարձրեցինք մեր սիրելի ծնողներին, ովքեր հաճույքով համաձայնեցին լրացնել թեստերը և դիտել սահիկները:

Փորձարարական դաս1

Դասը կհանձնարարեմ «Շրջված դասարանի» մեթոդով՝ կհանձնարարեմ խմբերին/դասարանը կբաժանեմ 4 խմբի/ համացանցում գտնել սկզբնաղբյուրներ հետևյալ հարցադրումների վերաբերյալ: Տանը խնդրել ծնողներին լրացնելու թեստը/ այն կա հավելվածում/:

- **Ի՞նչ է իրենից ներկայացնում համացանցը:**
- **Ի՞նչ է հակավիրուսային ծրագիրը:**
- **Ի՞նչ է համակարգչային զտիչը:**
- **Որոնք են ապահով համացանցի բնութագրիչները:**
- Դասի թեման ընտրել եմ « Համացանցի գրագետ օգտագործում» թեման: Նպատակ ունեմ օգնել ծնողներին, որպեսզի տանը կարողանան վերահսկել համացանցը իրենց փոքրիկների համար: Քանի որ աշակերտները լավ են սովորում և հեշտ են յուրացնում թեմաները, ապա նրանց օգնությամբ հեշտությամբ կկազմենք համապատասխան սահիկներ և հարցաշար: Դասի սկզբում կներկայացնենք խմբերի հետազոտության արդյունքները, կպատասխանենք առաջ եկած հարցերին: Կներկայացնենք կոնկրետ կետեր համացանցից գրագետ օգտվելու համար, այնուհետև աշակերտները իրենց խմբերով կպատրաստեն սահիկաշար՝ «Ապահով համացանց» թեմայով: Խմբերը կներկայացնեն սահիկները և իրենց ընտրությամբ 4 սահիկաշարերից կկազմեն մեկ սահիկաշար, որը կուղորդի ծնողներին.
- ինչպես իրենց երեխայի համար ստեղծեն առանձին օգտանուն,
- ինչպես արգելափակել արգելված էջեր,
- ինչպես սահմանափակել համակարգչից օգտվելու ժամանակը,
- Ինչպես օգտագործել հակավիրուսային ծրագրերը և համակարգչային զտիչները:

Փորձարարական դաս2

Այս դասը ևս կհանձնարարեմ «Շրջված դասարանի» մեթոդով՝ կհանձնարարեմ խմբերին /դասարանը կբաժանենք 4 խմբի/ համացանցում գտնել տեղեկատվություն հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

- **Ինչ է փոստային ծառայությունը:**
- **Ինչպես պետք է գրանցել էլփոստ/gmail/:**
- **Ինչ էք հասկանում «ինտերնետի ծառայություն» ասելով:**
- **Ինչպես տարբերել հավաստի և ոչ հավաստի ինֆորմացիան համացանցում:**

Դասի համար ընտրել եմ «**Ինտերնետի հիմնական ծառայությունները**» թեման: Նպատակ ունեմ աշակերտների մոտ զարգացնել համացանցից օգտվելու գործնական կարողությունները, էլեկտրոնային գրադարաներից, հանրագիտարաներից, տեղեկատուներից օգտվելու կարողություններ:

Դասը կսկսենք խմբերի ներկայացմամբ, կկատարենք քննարկում, կպատասխանենք հարցերին:

Այնուհետև աշակերտների օգնությամբ կթվենք ինտերնետի հիմնական ծառայությունները:

Որպես գործնական աշխատանք կհանձնարարենք խմբերին իրենց տրված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն գտնել էլեկտրոնային գրադարաներից, հանրագիտարաներից, տեղեկատուներից

Եզրակացություն

Քանի որ համացանցը հարթակ է տրամադրում ուսումնառության,ստեղծարարության, հաղորդակցության և խաղերի համար, այն խիստ արժեքավոր և գրավիչ է ողջ աշխարհի հարյուրավոր միլիոն երեխաների և երիտասարդների համար, ովքեր ամեն օր օգտվում են դրանից: Համացանցը և այն անթիվու անհամար սարքերը, որոնք միանում են համացանցին, երեխաներին և երիտասարդներին տրամադրում են խիստ արժեքավոր նոր գործիքներ, որոնք նրանք կարող են օգտագործել արտահայտելու կամ հաստատելու իրենց տեսակետները և լինելու իրենց իրավունքների տերը: Կարճ ասած՝ երբ մտածում ես այս տիրույթում քաղաքականության մասին, կարևոր է ըստ արժանվույն գնահատել թվային հեղափոխության դրական և ստեղծարար ասպեկտները և ձերբազատվել այն մտայնությունից, որ համացանցը զուտ կամ հիմնականում վտանգի աղբյուր է, որտեղ երեխաները և երիտասարդները անընդհատ փորձանքների են ենթարկվում: Բացի այդ, մենք պետք է դադարենք համացանցի և երեխաների ու երիտասարդների կողմից դրա օգտագործման մասին խոսելուց և մտածելուց կարծես թե դահիրենցկյանքիմիփակ կամ առանձին մաս է, որը հեշտորեն տարբերվում է «իրական կյանքից», որտեղգործում են լրիվ այլ կանոններ և չափորոշիչներ: Երեխաների և երիտասարդներիհամար համացանցը և այն սարքերը, որոնցով նրանք միանում ենհամացանցինիրականում նրանց իրական կյանքի մասն են: Դպրոցում կատարվածը նրանք շատ արագ վերստին կրկնում ու կատարելագործում են համացանցում: Իսկ համացանցում կատարվածը նրանք շատ արագ վերստին կրկնում ու կատարելագործում են դպրոցում: Սա շատ կարևոր անդրադարձներ ունի քաղաքականության համար: Սոցիալական աշխատողները, ուսուցիչները, իրավապահ մարմինների աշխատակիցները և յուրաքանչյուր ոք, ով

մասնագիտության բերումով գործ ունի երեխաների հետ վճարովի կամ անվճար հիմունքներով, պետք է որոշակի պատկերացում ունենա տեխնոլոգիաների մասին և թե ինչպես են երեխաներն ու երիտասարդներն օգտվում դրանցից: Առանց դա հասկանալու նրանք իրականում կտրված կլինեն երեխաների և երիտասարդների կյանքի կարևոր ասպեկտներից: Եվ եթե սա ճիշտ է երեխաների հետ աշխատող պրոֆեսիոնալների համար, ապա սա հատկապես ճիշտ է ծնողների և խնամակալների համար: Այդուհանդերձ, ընդգծելով և մտապահելով նոր տեխնոլոգիաների դրական ասպեկտները՝ չես փախչի այն իրողությունից, որ համացանցն իր հետ բերել է նաև մի շարք անցանկալի հետևանքներ: Դրանցից մի քանիսը կարող են նշանակալի վնասիռիսկերպարունակել երեխաների և երիտասարդների համար. դրանք ներառում են երեխաների և երիտասարդների հետապնդման նոր ձևեր:

Ես ընտրեցի այս թեման, քանի որ ինձ անհանգստացնում է ինտերնետի դրական կամ բացասական ազդեցությունը դեռահասների աշխարհայացքի վրա: Այսաշխատանքում ես ուսումնասիրություն կատարեցի մեր դպրոցի բարձր աշակերտների և նրանց ծնողների հետ և ինքս ինձ համար բացահայտեցի շատ նոր բաներ՝ իմանալով աշակերտների և նրանց ծնողների կարծիքը այս հարցի վերաբերյալ:

Գրականության ցանկ

- Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., ՇարխաթունյանՀ.«Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումըհանրակրթական դպրոցում»:
- Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ. «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց» :
- Аркусова И.В. Компьютерные инновации в современном высшемобразовании
- Safe.am

Հավելված 1

Օրվա դասի պլան

Ուսուցիչ՝ Նվարդ Գևորգյան

Առարկա՝ ինֆորմատիա	Ամիս/ամսաթիվ՝ 17/10/2022	Կիսամյակ՝ 1-ին	Դասարան՝ 11-րդ հումանիտար
Թեմա՝	**Համացանցի գրագետ օգտագործում**		
Օգտագործվող Նյութեր՝	Դասագիրք, համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ,«Անվտանգ համացանց» սահիկներ և թեստեր:		
Դասի Նպատակ՝	Աշակերտներին գիտակցել տալ համացանցում առկա վտանգների մասին, ուղղորդել համացանցի գրագետ օգտագործմանը:		
Վերջնարդյունքներ՝	1.Պարզել համացանցից ապահով օգտվելու աշակերտների իմացությունը, 2.Պարզել համացանցից օգտվելու ժամանակացույցը, 3 Պարզել, թե ո՞ր կայքերից են առավելապես օգտվում և ի՞նչ հաճախականությամբ 4.Պարզել, թե ծնողները որքանո՞վ են հետևողական համացանցից օգտվելուն, 5. Պարզել, որքանո՞վ են ծնողները դրական օրինակ ծառայում իրենց երեխաներին համացանցից օգտվելու տեսանկյունից		
Գործողությունների տևողություն	ՈՒսումնական գործունեություն աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ուսուցիչ	Կիրառվող մեթոդ(ներ)

2ր 10 բոպե	Նախապատրաստվում են դասին: Քանի որ խմբերը տանը աշխատել էին տրված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն գտնելով և մայրիկներին տարել էին թեստ և խնդրել լրացնելու նախաթեստը,դասը սկսում ենք թեստի հավաքելով:	Կատարում է հաշվառում: Ծնողների թեստերը հավաքելուց հետո «Հարցերի» միջոցով աշակերտներից պարզում է համացանցի վերաբերյալ գիտելիքները:	«Շրջված դասարանի մեթոդ» «Հարցադրումների մեթոդ»
10ր	Քանի որ դասը սովորել են «Շրջված դասարանի» մեթոդով, աշակերտները ուսուցչին են ուղղում իրենց հարցերը և պատասխանները ստանալով պատրաստվում են խմբային աշխատանքին	Հետևում է խմբային աշխատանքին, ուղղորդում խմբերին:	Ջիկսո մեթոդ:
10ր	Դասարանը բաշանվում է 4 խմբի՝ որոնցից երկուսը գրի են առնում ինտերնետի առավելությունները և կրթության բնագավառում օգտագործելու պայմանները: Մյուս երկու խմբերը գրի են առնում ինտերնետի վտանգները և օգտագործելու դժվարությունները: Նույն աշխատանքը կատարող խմբերը միավորվում են և միասին քննարկելով գրի են առնում համացանցից գրագետ օգտվելու կարևորագույն 10 դրույթ:	Կատարում էանդրադարձ և հանձնարարում տեստերը փոխանցել ծնողներին՝ լրացնելու նպատակով:	
10ր	Ներկայացնում են խմբային աշխատանքը:		
3ր	Հանձնարարում նոր դաս, «**Ինտերնետի հիմնական**		

	ծառայությունները» , հանձնարարում խմբերին գտնել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ. **Ինչ է փոստային ծառայությունը:** **Ինչպես պետք է գրանցել էլփոստ/gmail/:** **Ինչ էք հասկանում «ինտերնետի ծառայություն» ասելով:** **Ինչպես տարբերել հավաստի և ոչ հավաստի ինֆորմացիան համացանցում:**		

Օրվա դասի պլան2

Առարկա՝ ինֆորմատիա	Ամիս/ամսաթիվ՝	Կիսամյակ՝	Դասարան՝
	19/10/2022	1-ին	11-րդ հումանիտար
Թեմա՝	**Ինտերնետի հիմնական ծառայությունները**		
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ,սահիկ		

Դասի նպատակ՝	Աշակերտների մոտ զարգացնել համացանցից օգտվելու գործնական կարողությունները: Աշակերտների մոտ զարգացնել էլեկտրոնային գրադարաներից, հանրագիտարաներից, տեղեկատուներից օգտվելու կարողություններ:
ՈՒսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքներ՝	Աշակերտները կկարողանան ինքնուրույն գրանցվել էլեկտրոնային փոստում և սեփական էլ.փոստով նամակագրական կապ հաստատել ընկերների հետ: կկարողանան օգտվել On-line հաղորդակցման համակարգերից, FTP ծառայությունից, ICQ ծառայությունից: Կկարողանան պլանվորել և մասնակցել հեռուստակոնֆերանսների: Կկարողանան կատարել ֆայլերի փոխանցում համակարգիչների միջև:

Գործողությունների տևողություն	ՈՒսումնական գործունեություն աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)
3 րոպե 7րոպե 10րոպե 7 րոպե 5րոպե	1.Բաժանվում են խմբերի,միացնում համակարգիչները; 2.Պատասխանում են հարցերին, մասնակցում հարցերի քննարկմանը, ներկայացնում համացանցից գտած տեղեկատվությունը:	1.Կատարում է հաճախումների հաշվառում 2.Հարցադրումներ՝ պարզելու տանը որքանով են ծանոթացել դասի հիմնախնդիրներին, քանի որ խմբերին հանձնարարվել էր տանը գտնել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ. **Ինչ է փոստային ծառայությունը:** **Ինչպես պետք է գրանցել էլփոստ/gmail/:** **Ինչ էք հասկանում «ինտերնետի ծառայություն» ասելով:**	1.Համացանցի ի՞նչ ծառայություններ գիտեք: 2.Կարողանու՞մ եք օգտվել էլ. փոստից: 3.Ի՞նչ է ֆայլային սերվերը:	1.«Շրջված դասարան» 2«Հարցադրումների մեթոդ »

	3.Կատարում աշխատանք:	**Ինչպես տարբերել հավաստի և ոչ հավաստի ինֆորմացիան համացանցում** Կարճ դասախոսության մեթոդով՝ օգտվելով նախորոք պատրաստած սահիկաշարից, մատուցում բաց թողումները: Խմբային աշխատանք՝ հանձնարարել գտնել և սահիկաշար պատրաստել հետևյալ թեմաներով. Ինտերնետի վտանգները, Ինչ պետք է անեն ծնողները, փոքրերին հեռու պահելու ինտերնետից օգտվելու վտանգներից:		

	5.Նշում են նոր դասը	Կազմել թեստ՝ ուղարկել ծնողներին՝ պարզելու ինչ աջակցության կարիք ունեն և պատրաստել սահիկ, որի օգնությամբ ծնողները կկարողանան ապահովել իրենց տան համակարգչի աշխատանքի անվտանգությունը և կկարողանան իրենց փոքր երեխաների համար փակել համացանցի որոշ ծառայություններ և սահմանափակել աշխատանքի ժամանակը: 5.Հանձնարարում է նոր դասը		
Տնային առաջադրանքներ՝	ՈՒսումնասիրել «Ինտերնետային գրադարաններ, հանրագիտարաններ և տեղեկատուներ» թեման:			

Թեստ ծնողներին-1

1. Տան համակարգիչները ապահովված են հակավիրուսային և հակալրտեսային ծրագրերով և փոստային զտիչներով, որոնք մշտապես թարմացվում են:

□Այո □Ոչ

2. Մենք չենք բացում անծանոթներից ստացած էլեկտրոնային նամակները:

□Այո □Ոչ

3, Մենք միշտ զննում ենք նամակներին կցված հաղորդագրությունները:

□Այո □Ոչ

4, Մենք ընտանիքով օգտագործում ենք համակարգչային զտիչ:

□Այո □Ոչ

5. Համացանցում աշխատանքը ավարտելուց հետո , մենք համակարգիչը անջատում ենք ցանցից:

□Այո □Ոչ

6. Գաղտնաբառերը ընտանեկան գաղտնիք են, մենք դրանք ոչ մեկին չենք ասում:

□Այո □Ոչ

7. Մենք չենք բացում հանկարծակի բացվող պատուհանները և չենք հետևում դրանցում նշված հրամաններին: Դրանք կարող են վիրուսներ պարունակել:

□Այո □Ոչ

8. Մենք կանոնավոր կերպով ստեղծում ենք կարևոր ֆայլերի պահուստային պատճենները:

□Այո □Ոչ

9. Եթե տանը ունենեում ենք համակարգչի հետ կապված խնդիր, ապա դիմում ենք մասնագետի:

□Այո □Ոչ

10. Մեր համակարգչում երեխանները ունեն առանձին գրանցման հնարավորություն:

□Այո □Ոչ

Հարգելի ծնող

Եթե դուք հավաքել եք 9-ից 10 միավոր, ապա ձեր համակարգիչը անվտանգ եք շահագործում, շարունակեք զարգացնել համացանցից գրագետ օգտվելու ձեր գիտելիքները:

6-ից 8 դրական պատասխան հավաքելու դեպքում շատ լավ է, այնուամենայնիվ ժամանակ հատկացրեք ավելին իմանալու համար:

6-ից քիչ դրական պատասխան հավաքելու դեպքում ձեր գիտելիքները կատարելագործման կարիք ունեն, կխնդրեինք դիտել մեր աշակերտների կողմից պատրաստած սահիկաշարը: